

րատեսուհները ծաղկաքաղ հաւաքելով՝ բանասիրաց ծանօթութիւն մը տալու համար համառօտակի կը հըրատարակեն եալլն»։ Սուրբ Սարգիս եկեղեցիին մէջ դպրութիւն ընող տասներկու տարեկան տղան ոչ ալ ոք է՝ եթէ ոչ նոյն ինքն Երեմիա Ձէլէպին, որ իր Օրագրութիւնը կը սկսի 1648 տարուան Յունիս 11էն, երբ ինք տասներկու տարին նոր թեակոխած էր։ Գալով Թորոս կաթողիկոսի մահը և յուղարկաւորութիւնը նկարագրող հատուածին՝ անիկա բառ առ բառ նման է մեր Օրագրութեան մէջ եղածին (էջ 240-242)։ Ասկէ յայտնի կ'երևի թէ մեր ձեռագիրը Սամաթիոյ Ս. Սահակեան թանգարանին մէջ «անեղծանելի կեցած» ձեռագիրն է առանց որ և է տարակոյսի։

Այդ քաղուածին մէջ Թորոս կաթողիկոսի յուղարկաւորութեան նկարագրութենէն առաջ կան իրարմէ անջատ հինգ հատուածներ, որոնց շարագրութիւնն ու ամսաթիւերը տեղ տեղ կը տարբերին մեր բնագիրէն։

Դժբախտաբար կը պակսին Սամաթիոյ Ս. Սահակեան թանգարանի վերոյիշեալ ձեռագրի վրայօք աւելի տեղեկութիւններ, բացի Աստիկ Արեւելեան օրագիրի աւանդածէն, որպէսզի կարենայինք ճշգրիտ գաղափար մը կազմել անոր մասին։ Մենք կը խորհինք թէ այդ ձեռագիրը եթէ իր տեղը մնացած ըլլար՝ կարելի չէր որ հետագային չգրաւէր ազգային բանասէրներու ուշադրութիւնը եւ չծառայէր իբրեւ արժանահաւատ աղբիւր մը այդ ժամանակի պատմական դէպքերու, այդ պատճառաւ չենք տարակուսիր՝ թէ Ս. Սահակեան թանգարանի այդ ձեռագիրը այժմ մեր քով գտնուած Օրագրութիւնն է։ Իսկ առաջ բերուած հատուածներու շարագրութեան ու ամսաթիւերու ինչ ինչ տարբերութիւնները վերագրելի են ընդօրինակողներու կամայականութեան կամ անուշադրութեան։ Ձեռա-